Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ծրագիր (Տրանշ-4)

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն	6
Կառավարության համաֆինանսավորման հատուկ հաշվի հաշվետվություն	7
Դրամական միջոցների ստացման դիմումների հաշվետվություն	8
Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

Հայաստանի Հանրապետության կառավարությանը,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի (ԵԱԶԲ) միջև ստորագրված Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից Ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրի շրջանակներում ֆինանսավորվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում ծրագրի (Տրանշ-4) (Ծրագիր) կից ներկայացված Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունը, կառավարության համաֆինանսավորման հատուկ հաշվի հաշվետվությունը և 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացման դիմումների հաշվետվությունը, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում (Տրանշ-4) ծրագրի դրամական միջոցների մնացորդը և նույն ամսաթվին ավարտված տարվա ընթացքում ստացված և վճարված դրամական միջոցները՝ համաձայն Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՍ)՝ *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով»*, ինչպես նաև Ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրի համապատասխան հոդվածների:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ից (Կազմակերպություն)՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Grant Thornton

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 2-ի վրա, որը վերաբերում է հաշվապահական հաշվառման հիմունքներին: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են օժանդակելու «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի ղեկավարությանը՝ ԵԱԶԲ-ի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները չեն կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների համար

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի ղեկավարությունը պատասխանատու է սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (ՀՀՀՀՄՍ)՝ *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով»*, ինչպես նաև Ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրի համապատասխան հոդվածների համաձայն պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ծրագրի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն Ծրագրի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Grant Thornton

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին ՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Գնահատում ենք Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան
Առաջադրանքի պատասխանատու

14 հունիսի 2021թ.

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվություն

ԱՄՆ դոլար

	Ծանոթ.	Փաստացի		Պլանավորված		Տարբերություն	
		2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցների մնացորդը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ		821					
Ավելացնել՝ ֆինանսավորում	3						
ԵԱՋԲ վարկ	3.1	960,935	1,612,933				
Կառավարության համաֆինանսավորում	3.2	232,293	361,885				
Ընդամենը ծրագրի ֆինանսավորում		1,193,228	1,974,818				
Փոխարժեքային տարբերություն		430	378				
Նվազեցնել՝ Ֆինանսավորման օգտագործում							
ԵԱՋԲ վարկ							
(1) Ճանապարհների վերակառուցման աշխատանքներ, նախագծի մանրամասն պատրաստման ծառայություններ, ինժեներական և վերահսկողության ծառայություններ		960,935	1,612,933	1,081,604	1,733,602	(120,669)	(120,669)
(2) Չնախատեսված ծախսեր		-	-	-	-	-	-
Կառավարության համաֆինանսավորում							
(3) Ծրագրի շրջանակներում հողի ձեռքբերման և վերաբնակեցման ծախսեր		-	-	-	-	-	-
(4) Ներդրումային վարկի միջոցների հաշվին վճարվող պայմանագրերի գծով ՀՀ հարկերի և այլ պարտադիր վճարների համաֆինանսավորում		43,579	172,298	280,319	409,038	(236,740)	(236,740)
Ընդամենը Ծրագրի ծախսեր		1,004,514	1,785,231	1,361,923	2,142,640	(357,409)	(357,409)
Դամական միջոցների մնացորդը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		189,965					

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 14-ին

Ստեփան Մաչյան
Գլխավոր տնօրեն

Մարինա Սաֆարյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման ղեկավար, գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը կազմող 9-ից մինչև 13-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Կառավարության համաֆինանսավորման հատուկ հաշվի հաշվետվություն

ԵԱՀԲ վարկ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

ԱՄՆ դոլար

	2020թ.
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	821
Ավելացնել.	
Կառավարության համաֆինանսավորում	233,114
Ֆինանսավորման վերադարձ	(821)
Ընդամենը.	232,293
Փոխարժեքային տարբերություն	430
Նվազեցնել.	
Ծրագրային ծախսեր	(43,579)
Ընդամենը.	(43,579)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	189,965

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 14-ին

Ստեփան Մաչյան
Գլխավոր տնօրեն

Մարինա Սաֆարյան
Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման ղեկավար, գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 13-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների ստացման դիմումների հաշվետվություն

ԵԱՉԲ վարկ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
ԱՄՆ դոլար

Ամսաթիվ	Դիմումի համար	Գումար	Վճարված գումար
28.12.2020թ.	WA 003	761,940	761,940
28.12.2020թ.	WA 004	198,995	198,995
Ընդամենը		960,935	960,935

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2021թ. հունիսի 14-ին

Ստեփան Մաչյան	Մարինա Սաֆարյան
Գլխավոր տնօրեն	Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման ղեկավար, գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող

Այս հաշվետվությունը պետք է ընթերցվի Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 13-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ծրագրի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեություն

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ն (Կազմակերպություն) իրականացնում է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցում (Տրանշ-4) ծրագիր-ը (Ծրագիր)։ Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական զարգացման բանկի (ԵԱԶԲ) միջև 14 ապրիլի 2015թ. ստորագրված Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից Ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրի շրջանակներում։

2017թ. հոկտեմբերի 25-ին ստորագրվել է Վարկային համաձայնագրի թիվ 2 լրացուցիչ համաձայնագիրը, համաձայն որի հստակեցվել են Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և ծախսերի կատեգորիաները։

Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և ծախսերի կատեգորիաները ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Ծախսերի կատեգորիաներ	Հատկացված գումար ԱՄՆ դոլար	Ծախսերի ֆինանսավորում տոկոսով
Ներդրումային վարկ		
(1) Ճանապարհների վերակառուցման աշխատանքներ, նախագծի մանրամասն պատրաստման ծառայություններ, ինժեներական և վերահսկողության ծառայություններ	143,150,000	100% (առանց հարկերի)
(2) Չնախատեսված ծախսեր	6,850,000	100% (առանց հարկերի)
Կառավարության համաֆինանսավորում		
(3) Ծրագրի շրջանակներում հողի ձեռքբերման և վերաբնակեցման ծախսեր	4,500,000	100%
(4) Ներդրումային վարկի միջոցների հաշվին վճարվող պայմանագրերի գծով ՀՀ հարկերի և այլ պարտադիր վճարների համաֆինանսավորում	30,200,000	100%
Ընդամենը	184,700,000	

Ծրագրի նպատակն է Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի Ագարակից դեպի Քաջարան ճանապարհահատվածի (Ագարակ քաղաքից մինչև Քաջարան հատված 32 կմ) թողունակությունը ու վթարային վիճակի նվազեցումը։

Ծրագրի իրականացումը թույլ կտա ապահովել հետևյալ հիմնական խնդիրների լուծումը.

1. Նշված ճանապարհային միջանցքի շրջանակներում թողունակության ավելացումը և ճանապարհային երթևեկության անվտանգության մակարդակի բարձրացում,
2. Բեռների և ուղևորափոխադրումների անարգել երթևեկության համար պայմանների ստեղծում,
3. Բարելավել շուկաների հասանելիությունը, նվազեցնել լոգիստիկ ծախսերը,

4. Հայաստանի Հանրապետության տարածքով, այդ թվում՝ Մաքսային միության անդամ երկրներ բեռների տարանցիկ հոսքի ավելացումը,

5. Հարակից բնակավայրերի բնակիչների համար բարենպաստ տրանսպորտային միջավայրի ստեղծում:

Ծրագրի ավարտի ակնկալվող ամսաթիվը վարկի հասանելիության ժամկետի ավարտի ամսաթիվն է:

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3:

«Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների միջին քանակը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կազմել է 100 մարդ (2019թ.՝ 60):

2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1 Պատրաստման հիմքերը

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՀՀՄՍ)՝ «*Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով*», Եվրասիական զարգացման բանկի ուղեցույցների, ինչպես նաև վարկային համաձայնագրի համապատասխան հոդվածների պահանջների: Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա տվյալները, ինչպես նաև Ծրագրի սկզբից աճողական տվյալները: Համաձայն հաշվապահական հաշվառման այս սկզբունքի՝ դրամական մուտքերը ճանաչվում են ստացման պահին և ծախսերը ճանաչվում են վճարման պահին:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ): Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով (ներկայացման արժույթ):

ՀՀ դրամով իրականացված պետական ֆինանսավորման մուտքերը փոխարկվում են ԱՄՆ դոլարով գործարքի նախորդ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հայտարարված հաշվարկային փոխարժեքով: Ծրագրի գործընկերներին/խորհրդատուին ՀՀ դրամով և եվրոյով կատարված ուղղակի վճարումները գրանցվում են ԵԱԶԲ-ի կողմից կիրառվող փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդները վերահաշվարկվում են՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված փոխարժեքը. 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 522.59 ՀՀ դրամ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 479.7 ՀՀ դրամ):

Ծրագրի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներկայացնելու համար ծանոթագրություն 6-ում արտարժույթով արտահայտված դրամական միջոցների, կանխավճարների և կրեդիտորական պարտքերի մնացորդները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքով: ԱՄՆ դոլարից տարբերվող արժույթով հաշվեգրած ծախսերը փոխարկվում են ԱՄՆ դոլարի գործարքի/գործողության ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նախորդ օրվա փոխարժեքով:

2.3 Ֆինանսավորում

Ներդրումային վարկի միջոցների տրամադրումն իրականացվում է Ներդրումային վարկի միջոցների հաշվին վճարման ենթակա պայմանագրերով՝ գործընկերներին ուղղակի վճարումների մեթոդով:

Կառավարության համաֆինանսավորման գումարները ճանաչվում են որպես ֆինանսավորում և ներառվում են Ծրագրի ֆինանսական հաշվետվություններում միայն այն ժամանակ, երբ դրանք փոխանցվել են Ծրագրի ընթացիկ հաշվին («Կառավարության համաֆինանսավորման հաշիվ»), որը նույնպես բացվել է Հայաստանի Հանրապետության Պետական Գանձապետարանում:

2.4 Պլանավորված ծախսեր

Տարվա վերջի դրությամբ «Ծրագրի պլանավորված ծախսերը» բաղկացած են նախորդ տարվա վերջի դրությամբ «Ծրագրի փաստացի ծախսերի» և հաշվետու տարվա բյուջեի ծախսերի հանրագումարից:

2.5 Ծախսեր

Ծրագրային ծախսերը ճանաչվում են որպես այդպիսին և ներկայացվում են ծրագրի ֆինանսական հաշվետվություններում, երբ կատարվում են վճարումներ գործընկերներին՝ կատարված աշխատանքների դիմաց

3 Ծրագրի ֆինանսավորում

3.1 ԵԱԶԲ վարկ

ԱՄՆ դոլար	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ուղղակի վճարումներ	960,935	1,612,933
	960,935	1,612,933

ԵԱԶԲ միջոցների ֆինանսավորումն ըստ ներկայացված դիմումների բերված է ստորև.

ԱՄՆ դոլար		2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դիմում		
	WA 003	761,940
	WA 004	198,995
		960,935

3.2 Կառավարության համաֆինանսավորում

ՀՀ կառավարության կողմից 2020թ. համաֆինանսավորումն իրականացվել է գանձապետական հաշվին դրամական մուտքերի տեսքով՝ 121,414,858 դրամ ընդհանուր գումարով, որը համարժեք է 232,293 ԱՄՆ դոլարին (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 361,885 ԱՄՆ դոլար):

4 Կազմակերպության կողմից ստացված գումարների և ԵԱՋԲ-ի փոխհատուցումների համադրում 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ԱՄՆ դոլար

Հոդված	Դիմում	ԵԱՋԲ	Կազմակերպություն	Տարբերություն
(1) Ճանապարհների վերակառուցման աշխատանքներ, նախագծի մանրամասն պատրաստման ծառայություններ, ինժեներական և վերահսկողության ծառայություններ				
	WA 003	761,940	761,940	-
	WA 004	198,995	198,995	-
		960,935	960,935	-
Ընդամենը		960,935	960,935	-

5 Ծրագրի օգտագործված միջոցների մասնաբաժինը

ԱՄՆ դոլար

Ծախսերի կատեգորիաներ	Կուտակային ծախսեր 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Բյուջե	Ծրագրի օգտագործված միջոցների մասնաբաժին՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
(1) Ճանապարհների վերակառուցման աշխատանքներ, նախագծի մանրամասն պատրաստման ծառայություններ, ինժեներական և վերահսկողության ծառայություններ	1,612,933	143,150,000	1.13%
(2) Չնախատեսված ծախսեր	-	6,850,000	-
(3) Ծրագրի շրջանակներում հողի ձեռքբերման և վերաբնակեցման ծախսեր	-	4,500,000	-
(4) Ներդրումային վարկի միջոցների հաշվին վճարվող պայմանագրերի գծով ՀՀ հարկերի և այլ պարտադիր վճարների համաֆինանսավորում	172,298	30,200,000	0.57%
	1,785,231	184,700,000	0.97%

6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 2-ում՝ Կազմակերպության քաղաքականությունն է Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստել համաձայն ՀՀՀՀՄՍ-ի՝ *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով»*: Այնուամենայնիվ, Կազմակերպությունը ներկայացրել է նաև ֆինանսական վիճակի մասին առանձին հաշվետվություն՝ որպես բացահայտում, որը խրախուսվում է *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով»* ՀՀՀՀՄՍ-ում:

ԱՄՆ դոլար	Ծանոթ.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ծրագրի կուտակային ծախսեր		1,416,987	154,422
Կանխավճարներ		519,545	615,880
Դրամական միջոցներ		189,965	821
Ընդամենը ակտիվներ		2,126,497	771,123
Ֆոնդեր և պարտավորություններ			
ԵԱՋԲ-ի միջոցներ	3.1	1,612,933	651,998
Կառավարության համաֆինանսավորում	3.2	361,885	129,592
Կրեդիտորական պարտքեր		151,424	-
Փոխարժեքային տարբերություն		255	(10,467)
Ընդամենը ֆոնդեր և պարտավորություններ		2,126,497	771,123